

**« ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԵՆԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  
Կ.ՄԻՆԱՍՅԱՆԻ 2013Թ. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Մասնակցությամբ՝ Արմավիրի մարզպետարանի ՏԻՄ և ՀՊՄԾ գործունեության համակարգման վարչության պետ՝ Ա.Ղուկասյանի, համայնքի ավագանու և 30 բնակիչների

24.01.2014Թ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շենիկի գյուղական համայնքի ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նրանցից բխող օրենսդրական և ենթօրենսդրական ակտերով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին», ՀՀ օրենքով, համայնքի ղեկավարի աշխատակազմի, ավագանու և գյուղապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում իր լիազորությունները:

2013թ. գյուղապետարանի աշխատանքային ծրագրի հիմքում դրված են եղել համայնքի սոցիալտնտեսական զարգացման գերակա ուղղությունները:

Այս խնդիրների լուծման համար կարևորագույն պայման է հանդիսացել Արմավիրի մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի և համայնքի ավագանու ամենօրյա հոգատար վերաբերմունքը և համայնքի խնդիրների լուծմանն աջակից լինելու պատրաստակամությունը, որի արդյունքում արձանագրվել է որոշակի հաջողություններ, որոնք ըստ բնագավառների ներկայացնում են Ձեզ:

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԲՆԱԳԱՎԱՐ**

1. Համայնքի ղեկավարը աջակցում է համայնքի բնակչության գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը:

2013թ-ի մայիսի 17-ի և 25-ին տեղացած կարկուտի պատճառով վնասվեց նաև Շենիկ համայնքից մոտ 200հա հողատարածք, սակայն ի պատիվ ազգաբնակչության կամավոր հրաժարվեցին պահանջից և գրանցվեց միայն 35 հա պտղատու այգի, որի մասով ՀՀ կառավարության և Արմավիրի մարզպետի անմիջական միջամտությամբ հատկացվեց մի շարք կուլտուրաների սերմացուներ, դիզ-վառելիք, 18 անձի 40.0-ական և 15 անձի 50.0-ական դրամի ֆինանսական օգնություններ: Կատարվեց հատկացված սերմերի ցանքս:

Շատ վատ վիճակում է գտնվել ծիրանի բերքի իրացումը, մոտ 80%-ով այն չի իրացվել մթերքող կազմակերպությունների կողմից՝ բազմաթիվ պատճառաբանություններով:

Հացահատիկային կուլտուրաների և խաղողի բերքահավաքները կատարվել են լիարժեք:

Ոռոգման ջրի մատակարարումը ինչպես միշտ եղել է ծանր և դժվար ու ոչ բավարար, մեծ է ազգաբնակչության դժգոհությունը:

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է 62.40հա զարնանացան գարու և 94.0հա աշնանացան ցորենի ցանքեր:

Հողօգտագործողները շարունակում են նոր այգիներ հիմնել:

Սակայն նկատվում է ազգաբնակչության արտագաղթ, որը մտահոգիչ է:

Ազգաբնակչությունը հիմնականում զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ: Ուշադրության կենտրոնում են եղել նաև աճեցրած բերքի իրացման գործընթացը, գյուղատնտեսական մշակաբույսերի վնաստուների դեմ պայքարի աշխատանքները:

### ՀՈՂԱԳՐԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Ամենօրյա աշխատանք է տարվում հողօգտագործողների հետ հողի հարկի, գույքահարկի և տեղական տուրքի գծով գոյացած ապառքների հավաքագրման գործում:

Տեղեկատվություն է ներկայացվում անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանում՝ սեփականության իրավունքի գրանցման վկայականներում ճշտումներ կատարելու վերաբերյալ: Սակայն բացակայում է կադաստրի ստորաբաժանման կողմից օտարված հողերի մասին մեզ տեղեկատվության հատկացնելը, որի մասին չկա հստակ սահմանված կարգ: Նույն վիճակում է նաև համայնք- նոտարական գրասենյակի հարաբերությունը:

### ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Ծենիկ համայնքում գործում է 1 միջնակարգ դպրոց:

Գործում է 1 մանկապարտեզ 2 խմբով:

Կրթության որակը գտնվում է բարձր մակարդակի վրա:

Գործում է գրադարան, այն որոշ չափով վերանորոգված և կահավորված է, ունի 4500 կտոր գրականություն:

Բուժ.ամբուլատորիան կահավորված է սարքավորումներով, համայնքի բնակչության բուժ. սպասարկումը իրականացվում է ժամանակին և անթերի, նախատեսվում է ավելի ընդլայնել բուժամբուլատորիայի տարածքը, նոր սարքավորումներով վերազինելու պահանջ է զգացվում:

Համայնքում գործում է «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողով, որի հիմնական խնդիրը թափառաշրջիկ, անօթևան երեխաների հայտնաբերումն ու դաստիարակումն է: Ի ուրախություն մեզ համայնքում նման երեխաներ չկան:

Համայնքում ուշադրության կենտրոնում են գտնվում զոհված ազատամարտիկների և սոցիալապես անապահով անձանց ընտանիքները, որոնց տրվում է ֆինանսական օգնություն:

Ազգաբնակչության նկատմամբ իրականացվում է ճիշտ և ժամանակին հաշվառում, մշտապես ընթացք է տրվում բնակչության հուզող առօրյա խնդիրներին:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության բնագավառում ժամանակին և անթերի իրականացվում է զորակոչը, բնակչության շրջանում իրականացվում է ռազմահայրենասիրական դաստիարակչություն:

Համայնքում զորակոչից խուսափողներ չկան:

Համայնքում գործում է մեկ չորանոց և երկու ՀԵԿ-եր, որտեղ աշխատում են համայնքի բնակիչները:

Հաշվետու ժամանակահատվածում համայնքում դատապարտված անձինք չեն եղել:  
 Համայնքում գործում է ֆուտբոլի երկու տարիքային խումբ, որոնք մասնակցում են տարբեր առաջնությունների և գրավում են պատվավոր 1-ին տեղը:  
 Ծախմատի առաջնություններում նույնպես գրավում են լավագույն տեղերը:  
 Այդ հարցում օժանդակություն է ցույց տալիս Հայաստանի մանուկներ հիմնադար՝  
 Հայաստանի մանուկներ հիմնադրամի հետ համատեղ գյուղապետարանի շրջակայքում կառուցվում է զբոսայգի և մարզահրապարակ:

### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2013թ. տարեկան կտրվածքով հավաքագրվել է եկամուտներ՝

հազար դրամ

h/h	Եկամուտների անվանումը	պլան	փաստացի	%
1.	Հողի հարկ	7607.1	7622.5	100.2
2.	Գույքահարկ	560.0	637.3	113.8
3.	Տեղական տուրք	40.0	44.6	111.5
4.	Հողի վարձավճար	1000.0	1154.1	115.4
5.	Այլ մուտք	—	9.8	—
6.	Դոտացիա	6403.9	6403.9	100
7.	Սուրվենցիա	565.3	635.8	112.5
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>16176.3</b>	<b>16508.1</b>	<b>102.1</b>

2013թ. տարեկան կտրվածքով կատարվել է ծախսեր հետևյալ ուղղություններով՝

հազար դրամ

	Ծախսերի անվանումը	2013տարեկան		
		պլան	փաստացի	Կատարողական %
1.	Տեղական ինքնակառավարում	11277.9	11071.1	98.2
2.	Մանկապարտեզ	3898.4	3898.3	100
3.	Սոց. օգնություն	350.0	350.0	100
4.	Գյուղատնտեսություն հակակարկտային կայանի գազի ծախս	650.0	650.0	100
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>16176.3</b>	<b>15969.4</b>	<b>98.7</b>

2013թվականի դրությամբ աշխատավարձի և սոց. վճարումների պարտքեր չկան:

2013թվականի ընթացքում համայնքի ավագանին գումարել է 15 նիստ, որտեղ քննարկվել են համայնքի խնդիրներին վերաբերվող տարբեր բնույթի հարցեր և կայացվել որոշումներ:

Համայնքի ղեկավարի 2013թ. կատարած աշխատանքները գնահատվեց գերազանց:

### ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ


Չնայած, համայնքի բյուջեով նախատեսված է սոցիալ-տնտեսական զարգացման և որոշ ուղղություններով իրականացված միջոցառումներ, սակայն կան հիմնախնդիրներ, որոնց լուծումը հնարավոր չէ իրականացնել համայնքի միջոցներով:

### ԱՌԱՋՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ԳՆԵԱԿՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՑ Է

Համայնքում կան չլուծված մի շարք խնդիրներ`

1. Ղեռ ավարտված չէ գազաֆիկացման աշխատանքները/անհրաժեշտ է մոտ 25 մլն դրամ/:
2. Վերակառուցման խիստ անհրաժեշտություն ունի մշակույթի տունը և մանկապարտեզը:
3. Համայնքի ներքին ճանապարհների ասֆալտապատում մոտ 4 կմ-ի չափով:
4. Մարզահրապարակի կառուցում, հանգստյան գոտու ստեղծման հետ զուգահեռ /կա նախնական համաձայնություն COAF- ի և «ՇԵՆ» բարեգործական կազմակերպության հետ:
5. Գյուղի ռոտզման կերքին ցանցի և մայր ջրանցքի առանձին ջրագծի միացում մոտ 2.5 կմ չափով:
6. Ոռոգման ջրի և վճարների հատկացման խնդիր:

ՇԵՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Կ.ՄԻՆԱՍՅԱՆ